Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի (www.arspiu.com) կողմից իրականացվող ֆինանսական աջակցության ծրագրեր

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» (ԳԾԻԳ ՊՀ) պետական հիմնարկի կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» (ՀԳՌԿՄ) երկրորդ ծրագրի «Արժեշղթայի զարգացում» բաղադրիչ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» II Ծրագիրը, որի բաղադրիչներից է «Արժեշղթաների զարգացումը» (ԱՇՋ): Արժեշղթաների զարգացմանն ուղղված ենթածրագրերը իրականացվում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Ենթածրագրերի ընտրությունը կատարվում է մրցույթային կարգով՝ համաձայն գործող ընթացակարգի:

<u>Արժեշղթայի զարգացման բաղադրիչի</u> նպատակն է՝ աջակցություն ցուցաբերել կաթի, մսի, մրգի, բանջարեղենի, բարձրարժեք հատապտղի և մեղրի ոլորտների արտադրողներին, վերամշակողներին և արժեշղթայի այլ մասնակիցներին՝ արտադրանքի որակական ցուցանիշների, ներքին շուկայի պահանջարկի, սննդամթերքի անվտանգության պահանջների բարելավման, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքի արտահանման ծավալների ավելացման հարցերում:

2015-2019 թվականների ընթացքում բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է ֆինանսավորել 80 ծրագիր: Յուրաքանչյուր ծրագրի կարող է տրամադրվել 8.000-50.000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար, պայմանով, որ շահառուն կիրականացնի նույն չափի ֆինանսական ներդրում: Ծրագրի ընթացքում նախատեսվում է հատկացնել 3.5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք նպատակային ֆինանսավորում:

Բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է նպատակային ֆինանսական օժանդակություն տրամադրել ՀՀ օրենսդրությանը համապատասխան և պատշաճ ձևով գրանցված գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարող սուբյեկտներին, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին, արտադրական և սպառողական կոոպերատիվներին, գյուղատնտեսական մթերքի և սննդի վերամշակման ձեռնարկություններին, որոնք ներգրավված են արժեշղթաների մեջ և բավարարում են ծրագրի համապատասխանության և ընտրության չափանիշներին:

<u>Նպատակային ֆինանսավորման ուղղությունները.</u>

ԱՇՋ Բաղադրիչի շրջանակներում շահառուներին հատկացվող նպատակային ֆինանսավորման գումարները կարող են օգտագործվել ստորև նշված ծախսերի լրիվ կամ մասնակի ֆինանսավորման նպատակով.

1. Նոր սարքավորումների , վերամշակման սարքավորումների, ինչպես նաև տրակտորների ձեռքբերում, այդ թվում՝

- արտադրության և վերամշակման սարքավորումներ,
- հետբերքահավաքային մշակման և վերամշակման,
- պահեստավորման և պահպանման,

- լաբորատոր (ներառյալ՝ շարժական և հատուկ մասնագիտացած տեխնիկա և սարքավորումներ),
- փաթեթավորման և տեսակավորման,
- որակի վերահսկողության,
- բոլոր տիպի սարքավորումներ և տեխնիկական հոսքագծեր՝ կապված արտադրանքի որակի բարելավման և ծավալների ավելացման հետ:

2. Տեխնոլոգիական վերազինման սարքավորումներ,
3. «ՍԱԿՀ» Սննդի անվտանգության կառավարման համակարգի իրականացման ծախսեր՝ ներառյալ իրականացման ընթացակարգերի բոլոր փուլերը (ուսուցումներ, հետևյալ համակարգերի ներդրում՝ HACCP, ISO, օրգանական արտադրության, պատշաճ գործելակերպի բոլոր տեսակները, հարակից այլ տեխնիկական աջակցություն և այլն),
4. Տեղական և միջազգային հավաստագրերի ձեռքբերման և միջազգային կազմակերպությունների կողմից հավաստագրման ծախսեր,
5. Շուկայավարման և բրենդինգի ծառայությունների ձեռքբերման ծախսեր, ներառյալ՝ առևտրային նշանի և արտադրանքի արտաքին տեսքի (նաև փաթեթավորման, մշակման և այլն),
6. Բոլոր տեսակի բարձրարժեք մրգերի և հատապտուղների նոր սորտերի տնկիների ձեռքբերման ծախսեր,
7. Տեխնիկական աջակցության և մասնագիտական տեխնիկական և շուկայավարման (հատկապես արտահանման խթանման վերաբերյալ) խորհրդատվության ձեռքբերման ծախսեր:

Վերոնշյալ ակտիվների ձեռքբերումը կարելի է ֆինանսավորել ինչպես ԱՇՀ Բաղադրիչի նպատակային ֆինանսավորման, այնպես էլ Շահառուների համաֆինանսավորման հաշվին:

Բաղադրիչի շրջանակներում իրականացվող ծրագրերի պոտենցիալ ազդեցությունը

- Արտադրական հզորությունների ավելացում և արտադրվող գյուղմթերքի ծավալների ավելացում 20%-30%:
- Արտադրվող գյուղմթերքի արտադրատեսականիների ավելացում՝ միջինը 1-2 արտադրատեսակ յուրաքանչուր ենթածրագրով:
- Գյուղմթերքի արտահանման ծավալների ավելացում 10-20%, հայկական կաթնամթերքի, մասնավորապես՝ պանրի, կարագի և կաթի փոշու արտահանման ծավալների ավելացում, ապրանքների մրցունակության բարձրացում, նոր շուկաների հայտնաբերում և դիվերսիֆիկացում:
- Նոր աշխատատեղերի ստեղծում (կամ պահպանում) 80-160 մարդ:
- Սննդամթերքի անվտանգության պայմանների բարելավում և համապատասխան համակարգերի ներդրում, մասնավորապես ISO 22000-2005, HACCP, GMP և այլն: Սա հատկապես կարևոր է ԵԱՏՄ անդամակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած օրենսդրական պարտավորությունները կատարելու համար: Որակի կառավարման համակարգերի համապատասխանեցում միջազգային ստանդարտներին, ընտրված արժեշղթաների որակի բարելավում, արտադրական ծախսերի, խոտանի կրճատում, աշխատուժի արդյունավետության բարձրացում և այլն:
- Ծրագրի իրականացման արդյունքում բաղադրիչի ուղղակի շահառուների թիվը կկազմի առնվազն 500 մարդ, անուղղակի շահառուների թիվը (առանց սպառողների) կկազմի 15,000-20,000 մարդ (տնտեսություն/ընտանիք)՝ ներառյալ առաջնային գյուղմթերքների (կաթի, պտղի և այլն) արտադրությամբ զբաղվողները: